ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն

Digitally signed by ALAVERDYAN RUZANNA 6312590143
Date: 2022.10.12 10:46:34 AMT

# ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

«Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց » հիմնադրամ

11/Բ դասարան

Դասղեկ՝ Արմինե Միաքյելի Հովսեփյան

« 2022- 2023» ուսումնական տարի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| N | ազգանուն | անուն | հայրանուն | Ծննդյան օր, ամիս, տարի | սեռը | Ծնողի (խնամ) աշխատավ. զբաղմունք | Ընտանիքի սոցիալական վիճակը, անապահով. տեսակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ազատ | Հակոբ | Ասպետի | 07.01.2006թ. | ար. | | |
| 2 | Առաքելյան | Անժելիկա | Արարատի | 18.04.2006թ. | իգ. | | |
| 3 | Բաղալյան | Մելանյա | Գևորգի | 30.07.2006թ. | իգ. | | |
| 4 | Գալստյան | Մարի | Արթուրի | 12.05.2006թ. | իգ. | | |
| 5 | Գասպարյան | Արփինե | Կարենի | 21.06.2006թ. | իգ. | | |
| 6 | Գրեյան | Անահիտ | Արթուրի | 10.08.2006թ. | իգ. | | |
| 7 | Գևորգյան | Դավիթ | Արայի | 15.08.2006թ. | ար. | | |
| 8 | Գևորգյան | Էրիկ | Հենրիկի | 21.06.2006թ. | ար. | | |
| 9 | Թովմասյան | Լիլիթ | Լևոնի | 24.11. 2006թ. | իգ. | | |
| 10 | Ծպնեցյան | Շուշանիկ | Տիգրանի | 09.04.2006թ. | իգ. | | |
| 11 | Հակոբով | Էրիկ | Էդգարի | 28.11.2006թ. | ար. | | |
| 12 | Հովհաննիսյան | Սուսաննա | Արտակի | 05.04.2006թ. | իգ. | | |
| 13 | Մանուկյան | Անժելինա | Սուրենի | 07.06.2006թ. | իգ. | | |
| 14 | Մելքոնյան | Անի | Վահեի | 12.08.2006թ. | իգ. | | |
| 15 | Մկրտումյան | Լիանա | Կարենի | 08.08.2006թ. | իգ. | | |
| 16 | Մուխաելյան | Նազելի | Վահանի | 18.03.2006թ. | իգ. | | |
| 17 | Ներսիսյան | Նարեկ | Արթուրի | 10.01.2006թ. | ար. | | |
| 18 | Սահակյան | Գագիկ | Էդգարի | 09.11.2006թ. | ար. | | |
| 19 | Ստեփանյան | Իզաբելլա | Վիգենի | 14.09.2006թ. | իգ. | | |
| 20 | Վարդազարյան | Էրիկ | Կարենի | 06.01.2006թ. | ար. | | |
| 21 | Վարդազարյան | Կորյուն | Կարենի | 07.12.2006թ. | ար. | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | Վոլկովա | Միլենա | Արթուրի | 17.07.2006թ. | իգ. | | |
| 23 | Հակոբյան | Միլվա | Սարգիսի | 13.09.2006թ. | իգ. | | |
| 24 | Ներսեսյան | Աղավնի | Ստեփանի | 02.06.2006թ. | իգ. | | |
| 25 | Մխեյան | Անահիտ | Լևոնի | 02.08.2006թ. | իգ. | | |
| 26 | Այվազյան | Գրիգոր | Դավիթի | 23.09.2006թ. | ար. | | |
| 27 | Ստեփանյան | Ռոբերտ | Արայիկի | 20.06.2006թ. | ար. | | |

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

/նշել քայլերը, որոնք նպատակաուղղված են դեպի վերջնական նպատակը/

1. *Քաղաքացիական, բարոյական դաստիարակություն* - Քաղաքացիական հասունությունն ի շահ պետության քաղաքացիական պարտքը և սահմանադրական պարտականությունները կատարելու պատրաստակամությունն է, քաղաքացիական բարձր ինքնագիտակցություն և դիրքո-րոշում ունենալու անհրաժեշտությունը: Այսպիսի հատկանիշներով սերունդ դաստիարակելու նպատակով անհրաժեշտ է սովորողների մեջ սերմանել որոշակի բարոյական արժեքներ՝ պատասխանատվություն և անհուն սեր հայրենիքի ու հայ ժողովրդի հանդեպ, հասարակությանը և պետությանը օգուտ բերելու պատրաստակամություն, ստանձնած քաղաքացիական պարտավորություններն անշեղորեն կատարելու կամք:

2. *Հոգևոր դաստիարակություն* - Հոգևոր դաստիարակության նպատակն է բարոյական արժեքների սերմանումը: Այն շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Հոգևոր դաստիարակությունը յուրաքանչյուրիս հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող միջոց է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սովորողների մոտ սեր և հարգանք արթնացնել հոգևոր արժեքների նկատմամբ, բացատրել դրանց անհրժեշտ նշանակությունը մեր առօրյա կյանքում, սեփական արժեհա-մակարգում հոգևոր և նյութական արժեքների ճիշտ հարաբերակցության կարևորությունը: Անհրաժեշտ է սովորողներին ներկայացնել սեփա-կան մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, կարևորությունն ու նշանակությունը, խորացնել պատմամշակութային օջախ-ների, պետական և եկեղեցական տոների մասին գիտելիքները:

3. ***Գեղագիտական դաստիարակություն*** - Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացածության զգալի մասը: Գեղեցկության հանդեպ զգայուն մարդը կարիք է զգում իր կյանքը կառուցելու գեղեցկության կանոններով: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը: Անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը սևեռել գեղագիտական դաստիարակության կարևորության վրա, գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստելու նպատակով ծանոթացնել նրանց ազգային տոներին և ավանդույթներին, ինչպես նաև սեր սերմանել արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ՝ կազմակերպելով այցելություններ մշակութային տարբեր կենտրոններ: Խիստ կարևոր է ուշադրություն դարձնել սովորողների խոսքի կուլտուրային, միջանձնային շփումների բնույթին, շրջապատող միջավայրի գեղագիտական կողմին:

4. ***Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն*** – Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը բնութագրվում է հայրենիքին ծառայելու գործում յուրաքանչյուր քաղաքացու կողմից սեփական դերը խորը գիտակցելով: Այն սովորողների մոտ ձևավորում է հայրենիքի նկատմամբ հավատարմության, սիրո, հպարտության, պարտքի զգացում, բարձր պատասխանատվություն, ազգային ավանդույթների, մշակույթի հանդեպ հետաքրքրություն, սերմանում է ակնածանք ֆիդայինների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Սովորողների մեջ հայրենասիրություն բորբոքելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել ռազմա-հայրենասիրական թեմաներով զրույցներ, քննարկումներ, ներկայացնել արցախյան հերոսամարտի քաջորդիների սխրանքները, կարևորել ՀՀ պետական խորհրդանիշները: Յուրաքանչյուրը պիտի գիտակցի, որ հայ մարդն ամուր է զգում իրեն սեփական հայրենիքում:

5. ***Ֆիզիկական դաստիարակություն*** – Ֆիզիկական դաստիարակությունն օգնում է բարելավել, վերահսկել և պահպանել մարդու հոգեկան և ֆիզիկական առողջությունը: Այն հնարավորություն է տալիս պայքարել նստակյաց ապրելակերպի դեմ, նպաստում է ակտիվ կյանքին, սովորեց-նում, թե ինչպես օգտվել ազատ ժամանակից, բարելավում է ինքնագնահատականը, խթանում է թիմային աշխատանքը, օգնում զարգացնել կարևոր արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հարգանքը, համերաշխությունն ու պատասխանատվությունը: Հետևաբար խիստ անհրաժեշտ է սովորողներին համակողմանիորեն բացատրել ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի դերն ու նշանակությունը մեր կյանքում, ձևավորել վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունք, հետևել երեխաների կեցվածքի ճիշտ ձևավորմա-նը:

6. ***Աշխատանքային դաստիարակություն*** – Ելնելով աշխատանքային դաստիարակության կարևորությունից՝ անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել համոզմունք, որ աշխատանքը հանդիսանում է հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուր: Երեխային պետք է բացատրել, որ մասնագիտության ճիշտ ընտրությամբ է պայմանավորված հետագա մասնագիտական կյանքի հաջողությունը, աշխատավայրում լիարժեքության, բավարարվածության և ներդաշնակության զգացումը: Սովորողների մեջ աշխատանքի նկատմամբ սեր և պահանջմունք ձևավորելու համար շատ կարևոր է աշխատասիրության, նպատակասլացության, պատասխանատվության սերմանումը: Անհրաժեշտ է

ակտիվ մասնակցություն ցուցաբերել հանրօգուտ աշխատանքներին: Շատ կարևոր է հետևել սովորողների կողմից գույքի խնամքին, դասասենյակի մաքրությանը, սանիտարահիգիենիկ վիճակին:

7. ***Բնապահպանական դաստիարակություն*** – Անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել բնապահպանական հիմնախնդիրներին, սովորեցնել պահպանել հայրենի բնությունը, հոգատարություն ցուցաբերել շրջակա միջավայրի հանդեպ, խնամել դասարանի կանաչ անկյունը: Շատ կարևոր է մասնակցությունը մերձդպրոցական տարածքի կանաչապատման աշխատանքներին:

## ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

## /նկարագրել/

Դպրոց-ընտանիք կապը սովորողի կրթության որակի բարձրացման կարևոր նախադրյալն է: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավոր-վեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է.

- ապահովել դպրոցի և ընտանիքի համագործակցությունը,
- ծնողներին մշտապես իրազեկել իրենց երեխաների առաջադիմության, կարգապահության և հաճախումների մասին,
- համատեղ բացահայտել և քննարկել սովորողի հետաքրքրությունները, հակումները, պահանջմունքները, կարիքները և իրականացնել դրանց բավարարման համար համապատասխան քայլեր,
- հրավիրել ծնողներին՝ երեխաների հետ զրուցելու իրենց մասնագիտությունների և մասնագիտական հաջողությունների մասին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

/Պլանավորել տարվա աշխատանքն ըստ ուսումնական շաբաթների: Կատարված աշխատանքը գրել ,,Մեկնաբանություն,, բաժնում: Պլանավորած, բայց չկատարած աշխատանքի պատճառը նշել նշումներ բաժնում/

| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ԿԱՏԱՐՈՂ | ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ | ՆՇՈՒՄՆԵՐ Այս բաժնում հիմնավորել պլանավորած-չկատարված աշխատանքի պատճառը |
|---|---|---|---|---|---|
| | ՍԵՊՏԵՄԲԵՐ | | | | |
| I | Կազմակերպչական հարցերի քննարկում.<br>• Դասագրքերի բաշխում<br>• Դասարանի աշխորհրդի կազմի և նախա-գահի ընտրություն<br>• Դասարանի ավագի ընտրություն<br>• Հերթապահության սահմանում<br>• Դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում | 05.09.2022թ. - 09.09.2022թ. | Սովորող, դասղեկ | Կատարված է: | |
| II | Կարգապահական խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիների համակողմանի քննարկում սովորողների հետ | 12.09 - 16.09 | Սովորող, դասղեկ | Կատարված է: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| III | Ես անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ… Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային արժեքները: Անկախության անգնահատելի դերն ինձ համար | 19.09 - 23.09 | Դասղեկ | Կատարված է: | |
| IV | Հոգեբանական թեստերի օգնությամբ անձի բնութագրական հատկանիշների բացահայտում (կոնֆլիկտայնություն, ագրեսիվություն, վատ սովորույթներ) | 26.09 - 30.09 | Հոգեբան, դասղեկ | | |
| | ՀՈԿՏԵՄԲԵՐ | | | | |
| V | Ամենամարդասեր մասնագիտությունների շարքից՝ մանկավարժություն… Մասնագիտական ճիշտ կողմնորոշման կարևորությունը | 03.10 - 07.10 | Դասղեկ | | |
| VI | Կարողանալ ասել «Ոչ»՝ զրույց վնասակար սովորությունների մասին (ծխախոտ) | 10.10 - 14.10 | Դասղեկ | | |
| VII | Միջանձնային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, տարբեր սեռունդների անխուսափելի բախումները և դրանց ճիշտ հանգուցալուծումները | 17.10 - 21.10 | Դասղեկ | | |
| | ՆՈՅԵՄԲԵՐ | | | | |
| VIII | «Տոնդ շնորհավո՛ր, իմ լուսե մայրաքաղաք»՝ Երևանի օրվա կապակցությամբ այցելություն Էրեբունի թանգարան | 31.10 - 04.11 | Դասղեկ | | |
| IX | Բարին որպես բարիք և ձգտում | 07.11 - 11.11 | Դասղեկ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| X | Փոխըմբռնում՝ ազնիվ և անկեղծ հարաբերություններր մեր դասարանում (դիտարկում, վերլուծություն, քննարկում) | 14.11 - 18.11 | Դասղեկ | | |
| XI | «Սովորողների իրավունքները և պարտականությունները դպրոցում» թեմայով քննարկում | 21.11 - 25.11 | Դասղեկ | | |
| XII | Առողջ ապրելակերպի կարևորությունը (թմրամիջոցներ, թմրամոլություն, վարակներ) | 28.11 - 02.12 | Դասղեկ | | |
| | ԴԵԿՏԵՄԲԵՐ | | | | |
| XIII | Երկրաշարժի զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ՝ ծանոթացում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ձևերին և մեթոդներին | 05.12 - 09.12 | Դասղեկ | | |
| XIV | Մարդու իրավունքների իմացությունը որպես հզոր վահան ընդդեմ անարդարության | 12.12 - 16.12 | Դասղեկ | | |
| XV | 1-ին կիսամյակի առաջադիմության նախնական արդյունքների քննարկում | 19.12 - 23.12 | Դասղեկ | | |
| | ՀՈՒՆՎԱՐ | | | | |
| XVI | 2-րդ կիսամյակի հետ կապված կազմակերպչական հարցերի քննարկում | 09.01.2023թ. - 13.01.2023թ. | Դասղեկ | | |
| XVII | Պատմության դասերի կարևորությունը | 16.01 - 20.01 | | | |
| XVIII | Հայոց բանակի 31-րդ տարելիցը | 23.01 - 27.01 | | | |
| | ՓԵՏՐՎԱՐ | | | | |
| XIX | Բացակայությունների, ուշացումների հետ կապված հարցերի քննարկում | 30.01 – 03.02 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| XX | Գիտության և հումանիզմի օրվան նվիրված զրույց | 06.02 – 10.02 | | | |
| XXI | Տեառնընդառաջի խորհուրդը | 13.02 – 17.02 | | | |
| XXII | Մայրենիի օր՝ փետրվարի 21 | 20.02 – 24.02 | | | |
| | ՄԱՐՏ | | | | |
| XXIII | «Դռները բացե՛ք, գարուն է գալիս» | 27.02 – 03.03 | | | |
| XXIV | Կանանց միամսյակին ընդառաջ՝ կնոջ դերը հասարակության մեջ | 06.03 – 10.03 | | | |
| XXV | Սթրեսը և նրա հաղթահարումը | 13.03 – 17.03 | | | |
| XXVI | Երջանկության միջազգային օր՝ մարտի 20 | 20.03 – 24.03 | | | |
| | ԱՊՐԻԼ | | | | |
| XXVII | Մայրության և գեղեցկության օր՝ ապրիլի 7 | 03.04 – 07.04 | | | |
| XXVIII | «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես» թեմայով զրույցի միջոցով բազմակարծության և աշխարհայացքի ձևավորում | 10.04 – 14.04 | | | |
| XXIX | Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր՝ ապրիլի 18 | 17.04 – 21.04 | | | |
| XXX | Հայոց ցեղասպանության հիշատակի օր՝ ապրիլի 24: Այցելություն Ծիծեռնակաբերդ | 25.04 – 28.04 | | | |
| | ՄԱՅԻՍ | | | | |
| XXXI | Աշխատանքի օրվան նվիրված զրույց | 02.05 – 05.05 | | | |
| XXXII | Հաղթանակի և խաղաղության օրվան նվիրված զրույց | 08.05 – 12.05 | | | |
| XXXIII | Ապօրինի միգրացիա և մարդկանց թրաֆիքինգ | 15.05 – 19.05 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| XXXIV | Քննարկում փոխադրական քննությունների անցկացման կարգի մասին | 22.05 – 26.05 | | | |